Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՄ-243 10.05 2024թ.

«ԴԵԼՏԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԿԱՐԱԲԱՇՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Դելտա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Վաճառող) միջև 2024 թվականի հունվարի 30-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/6-3 պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Համաձայն «Դելտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության Վաճառողն առաջարկում է լուծել Պայմանագիրը 57-րդ չափաբաժնի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման գումարը կազմում է 16380 /տասնվեց հազար երեք հարյուր ութսուն/ ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման գումարը՝ 24570 /քսանչորս հազար հինգ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024 թվականի մայիսի 16-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների գումարները, ապա Վաճառողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Պատվիրատուի 1570053952390100 հաշվեհամարին և վճարված կտրոնները ներկայացնել Պատվիրատուի գնումների բաժնին:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ. Զոհրաբյան